ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 30 հոկտեմբերի 2008 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը.
Նախագահությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Զ. Ղուկասյանի և Կ.Բալայանի

Քննության առնելով «Դարեսկիզբ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ՝ փաստաբան Տիգրան Աթանեսյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Դիմողը սահմանադրական դատարան է դիմել 06.10.2008թ.՝ խնդրելով ՀՀ Նախագահի 2008թ. մարտի 1-ի ՆԽ-35-Ն հրամանագրի 4-րդ ենթակետը և նույն ենթակետի՝ ՀՀ Նախագահի 2008թ. մարտի 13-ի ՆԽ-38-Ն հրամանագրով սահմանված խմբագրությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածին, 44-րդ հոդվածին, 55-րդ հոդվածի 14-րդ կետին և 117-րդ հոդվածի 6-րդ կետին հակասող և անվավեր:

ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմը 08.10.2008թ. No Ա-437 գրությամբ վերադարձրել է դիմումը՝ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով («Եթե.... այն ներկայացրել են սահմանադրական դատարան դիմելու իրավունք չունեցող մարմինը, անձը (անձինք), ապա սահմանադրական դատարանի աշխատակազմը հնգօրյա ժամկետում վերադարձնում է դիմումը»):

20.10.2008թ. դիմողը բողոք է (մտից թիվ 4-195) ներկայացրել 06.10.2008թ. ՀՀ սահմանադրական դատարանին ներկայացված դիմումը վերադարձնելու դեմ:

Դիմումի ուսումնասիրության արդյունքներով, կարծում ենք, որ գործի քննությունը ենթակա է մերժման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներից ելնելով՝ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը՝ Սահմանադրությանը, իսկ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածը սահմանում է սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների սպառիչ շրջանակը: Մասնավորապես, Հանրապետության Նախագահի հրամանագրերի սահմանադրականության հարցով ՀՀ սահմանադրական դատարան կարող են դիմել Հանրապետության Նախագահը, պատգամավորների առնվազն 1/5-ը, կառավարությունը, մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով, դատարանները և գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով (հոդվ. 101, կետ 7) :

Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված *օրենքի* դրույթի սահմանադրականությունը:

Ելնելով վերոգրյալից, չնայած այն հանգամանքին, որ դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ Նախագահի վերոնշյալ հրամանագիրն, ընդդատյա է սահմանադրական վերահսկողության, սակայն այն ներկայացվել է տվյալ համատեքստում սահմանադրական դատավարության սուբյեկտ չհանդիսացող անձի կողմից: Ուստի և դիմումի քննությունը ենթակա է մերժման:

Միաժամանակ անհրաժեշտ է արձանագրել հետևյալ փաստերը: Նախ և առաջ դիմողը լիարժեք չի տիրապետում ՀՀ Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի այն դրույթներին, որոնք սահմանում են

սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների սպառիչ ցանկը, սահմանադրական դատարանին ընդդատյա գործերի շրջանակը: Թերևս այդ դրույթների իմացությունն անհրաժեշտ պայման է սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու համար, հատկապես այն դեպքում, երբ դիմումը ներկայացնում է մի անձ, ով ունի փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր (Արտոնագիր No 78): Բացի դրանից, դիմումը պարունակում է քաղաքական բնույթի ոչ կոռեկտ գնահատականներ և փաստաբանին ոչ վայել արտահայտություններ:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 2-րդ կետով, Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը ՈՐՈՇԵՑ.

«Դարեսկիզբ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ՝ փաստաբան Տիգրան Աթանեսյանի դիմումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝